ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.09.2012թ.
182-ի 6

Ղեւոնդ Ալիշանի անվան թիվ 95 դպրոցի
տնօրեն տիկին Սվետլանա Ակոջյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի տիկին Ակոջյան,

17.08.2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել Ղեւոնդ Ալիշանի անվան թիվ 95 դպրոց՝ 1-ին դասարանի ընդունելության համար:
2. Ո՞ր իրավական ակտով է սահմանված այդ փաստաթղթերի ցանկը:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է թերի պատասխան, քանի որ չի տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցման 1-ին հարցի պատասխանը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան